

Ա. ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ*

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)


1951, հունիս 26, Վիեն

Վեհափառ և ամենափրեշի Հայրապետ^(*)

Ֆրանսիայի այս գալառական քաղաքը
եկած՝ չորս-հինգ շաբաթ հանգչելու համար,
ստացաւ Դարեվանքի տեսուց (Անթիլիա-
սեն), Դերենիկ և պահպանութեն նաև մը
որով Նորին Սրբազնությունը ինձի կ'իմաց-
նել յէ աւ. Պարտամյանի ձեռքն հաջողեր է
ամեն կոմիտասյան քանի մը ձեռագիրները
և զանոնք տվեր է Ձեր Վեհափառության
ներկայացուցիչ պրոֆեսուոր Աշոտ Աբրա-
համյանին, որպեսզի զանոնք Ձեզ հանձնեն:

Տանկապի է որ Ձեր Վեհափառությունը
գիտնա յէ ինչպես այդ ձեռագիրները և ա-
տուց պես դեռ որիշներ ալ փրկվեցան կո-
րուսուն նոգածությանց շնորհիվ Փարիզի
Կոմիտասյան Հանձնաժողովի, որուն պա-
տիվն ունին նախագահն ըլլալու:

Երբ Կոմիտաս Վարդապետ, 1915-ի ապ-
րիլյան ահավոր օրերուն խոսք մը ուրիշ
մեծարմեր հայ մովորականներու նետ
տարագրվեցավ Պոլսեն, իրեն ի նպաստ մի-
ջամտողներ եղան Ժեներաթյուրք կառավարու-
թյան մոտ և Կոմիտաս կրցավ դառնալ Պո-
լիս, բայց իր կրած նոգումներն ցնցված
ան բռնված էր Փարիզու անունով ծանոթ
ջղային ծանր հիվանդությամբ: Պոլսեն այս
հիվանդը դրկեցին Փարիզ, և մենք հոս կազ-
մացինք Հանձնախումը մը որ Բարկ եկած
գումարները հավաքեց և տարիներով պա-
նեց մեր թանըագին երաժշտագետը Փարիզի



Վիժդուիթի ամելի մեջ, մասնագետ պրո-
ֆեսուրներու խնամքին տակ, ու նոյն ատեն
ճարեց հարկ եղած դրամը՝ տպագրելու հա-
մար Կոմիտաս Վարդապետի երաժշտական
գործերը, որոնք մեծ մասամբ անտիպ մնա-
ցած էին: Վարդապետը, հիվանդանալին
առաջ, երեք հավաքածու միայն հրատարա-
կած էր, մին 1906 ին, երբ եկատլ տարի մը
Փարիզ մնաց, «Հայ Քնար» տիտղոսով,
մուս երկուրը՝ Լայպցիկ, երբ Կոմիտաս

* Ծարունակված «Հայմանքին» ամսագրի 1972
թվականի № Է-ից:

*) Խանակը սովորված է Տ. Գևորգ Զ. Զորեքչյան
կարողիկոսին:

հրավիրվեցավ Պոլսի իր դպրապես և իր երածշուագետն: «Հայ Քնարը» հրատարակվեցավ հասույթով հայ երածշուայան այն առջին մեծ նվազահանդեսին զոր Կոմիտասի ղեկավարությամբ սարքեց Փարիզի մեջ Հայկական Միություն, անունը կրող մշակութային կազմակերպությունը. նվազահանդես, որու մեջ եւ ֆրանսերեն բանախոսությունն մը ըրի հայ ժող. բանաստեղծության և երածշուայան վրա: Այդ նվազահանդեսը և այդ բանախոսությունը թէ՛ հայ ժողովորդին և թէ՛ միջազգային երաժշտագիտական շրջանակներուն մեջ տարածեցին և հեղինակավոր դարձրին հայ ինքնուրույն երածշուայան գոտիչ ու ծաղկեցուից Կոմիտասի անունն ու գործը: Հայպղիկ տպաված երկու հավաքածուները Կոմիտաս ինքն իսկ է որ Պոլս մեջ ճարած իր միջոցներով հրատարակեց: Իսկ մեր Փարիզի Կոմիտասան Հանձնաժողովը Պոլսն ըերեւ տվալ Կոմիտասյան ձեռագիրներն ինչ որ պահանջված գտնվեցավ պատրիարքանեցին մեջ, և հրատարակեց: Եվ ոչ միայն անտիպա գործերը հրատարակեց, Կոմիտասի դաշնավորած պատրագությունը եկեղեցական երգերը, պարի եղանակները (դաշնակի համար) հայ ժողովրդական մեներգները և խմբերգները, այլև երկրորդ տպագրությունը կատարեց «Հայ Քնար»-ին և Հայպղիկ տպաված երկու հավաքածուներուն, որոնք սպառած էին: Ներկայիս մամլուտակ ուժինը հավաքածու մը, որ լուս պիտի տեսնե թիշ ատենան: Մտադիր ենք հրատարակել նաև «Տեր Կեցո»-ի և «Ո՛վ Սեծաւարան»-ի կոմիտասյան դաշնավորությունը: Որոշած էնք վերջապես հրատարակել «Մշշ շորորը» և «Մերիարի» պարի եղանակները զոր Կոմիտասի դաշնավորած է և մնացած են անտիպա, ինչպես Կոմիտասի հավաքած ու ձայնագրած և դեռ չդաշնավորած 236 էջ բոնոր հայ ժողովրդական երգերու եղանակները: Ինչ որ մեր Հանձնաժողովի ամենան զործունյա անդամներն մին, նախագահ ա. Հարենցը հանձներ է ա. Պարսամյանին, կարծելով թե ան պիտի գտնե միջոցները ատոնք հրատարակելու, այդ երկու դաշնավորած պարի եղանակներն են և 236 էջ բոնոր ժող. երգերը՝ Կոմիտասի ձեռուով՝ հայկական խազագործությամբ՝ ձայնագրված և դեռ չդաշնավորած կոմիտասյան ձեռագիրները: Այդ խոսքն է որ Դերենիկ Եպիկոպոս հանձներ է Ձեր Վեհափառության ներկայացուցիչ ա. Արքահայրյանին:

Մենք վստահ ենք որ Ձեր Վեհափառությունը պիտի ընե ինչ որ հարկավոր է որ պեսզի այդ կոմիտասյան ձեռագիրները խնամքով պահպիսին Հայության Մատենադարանին կամ Երևանի Պետական Մատենա-

դարանին մեջ (մեր հանձնաժողովը արդեև իսկ Երևանի Պետական Մատենադարանին ողիկած է բոլոր այն կոմիտասյան ձեռագիրները զոր Բրատարակած ենք): Պետք է ավելցնեն նաև որ եթե Կոմիտասի մահվելնե հետո՝ մարմինը դրկվեցավ Երևան ու Էջմիածին, մեր Հանձնաժողովին կողմէն ևս ինքը էի որ այդ խնդրանքը ներկայացուցի համարով մը Խ. Հայատանի կառավարության, Կոմիտասի մարմինը մեր Հանձնաժողովին միջին ծախսով փոխադրվեցավ մինչև Բայում, Բաթումին Երևան ու Էջմիածին Խ. Հայատանի կառավարությունը իր ծախսով փոխադրեց զայն և ազգային շքել հուղարկավորությունը զայն խաղողի:

Տես տարակութիր որ Ձեր Վեհափառությունը պիտի համի ընել ամեն ինչ որ կրնա որպեսի դաշնավորած երկու պարի եղանակները և 236 էջ բոնոր հայ ժողովրդական երգերու եղանակները հրատարակվին. բայց այդ հրատարակությունը պիտի ըլլա միմայն հայերն ենզպով հայ հասարակության համար միայն, մինչդեռ մեր Հանձնաժողովը Կ'ուզե հրատարակել զանոնք հայերնով ու թէ՛ հայ ժողովրդին և թէ՛ միջազգային երածշտագիտական հասարակության համար:

Մեծապես շնորհակալ պիտի ըլլայինք ուրեմն Վեհափառ Տեր, եթե համեմիր մեր Հանձնաժողովին ողիկելու Փարիզի Հայոց եկեղեցվոյն հասցեով՝ <խնամյալ> =օրինություն մը «Մշշ Ծորոր»-ին, «Մերիարի»-ին և 236 էջ գրավով հայ ժող. երգերու եղանակներուն (Վարդան Սարգսյան, որ Կոմիտասի խազագործ աշակերտն է և այժմ Մարտելի Հայոց Մայր եկեղեցվոյն դպրագետն է, պիտի զանոնք վերած եվրոպական նորայի):

Համեցեք ընդունել, Վեհափառ Տեր, իմ խորին հարգանքին հավաստիքը:

Ա. ԶՈՊԱՆՑԱՆ

1952, Բունվար 16, Փարիզ

Գարեգին արք. Խաչատորյան
Պատրիարք Կ. Պոլս Հայոց

Ամենապատիվ Սրբազն հայր

Ստացա Ձեր 5 հունվար թվակիր համակը: Ծնորհակալ եմ Ձեր Ամենապատվության Ամանորի և ս. Ծնունդի տոներուն առթիվ իմծի ուղղած բարեմաղյության համար, ու ինք այ բոլոր սրտով կը մաղթեմ որ Ձեր ուժերը կոնսապատկիմ որպեսի կարենաք իրագործել այն բոլոր շինարար ծրագիրները

զոր ոնքի ի հայաստ ծանրորեն վճարված թրբահայ համայնքին:

Ես ցարդ թիշ անգամ Զեզի համակ ուղարկեցի, չխանգարելու համար Զեզ Զեր ծրագրած ազգօգուտ գործունեության մեջ, բայց բանի որ հաճույք պիտի պատճանել Զեզի մերթ ինձմեն համակ ստանալնի, պիտի գորհացում տամ Զեր ազնիվ ցանկությանը:

Սուածին հարցը որում վրա Զեր ուշադրությունը պարտք կը համարիմ հրավիրել իմ ապատած Կենք. Վարժարանին հարցն է. զայն միմնող Զեր մեծագույն հախորդմերեն մին եղավ— Ներսես Վարժապետյան պատրիարք: Իմ ուսանողության շրջանին, այդ վարժարանին մեջ համախմբված էին արևմտահայության ամեննեն հեղինակավոր մտավորական, ուսուցչական ոժերը, ինչպես և ֆրանսացի կարող ուսուցչապետները: Ինչքան որափ պիտի ըլլայի երես Զեզմե իմանայի որ այդ վարժարանը, որուն բազմաթիվ կարևոր հայ դեմքեր են եղած ամեն ճուղին մեջ, հիմակ ալ Զեր ամենասրբության հովանույն տակ միննույն մտավորական բարձր միջավայրը կը ներկայացնեմ: Ընորիկ դրությանց հայոց եկեղեցվույն ճոխ հասույցներու, այդ վարժարանին մեջ բազմաթիվ եղած են աղքատ, որք, ճրիավարծ ուսանողները որոնցմ մին ալ են եղած:

Կենթադրեմ թե հիմակ ալ այդ վարժարանին դեմքը նոյն համակրական նկարագիրն ունի:

Մեկ երկու ամիս հետո Պոսլը Պայքար օրաթերթին մեջ պիտի երևա Հուշերուս երկրորդ մասը, որ գրեթե ամրողապես նվիրված է Կենդրոնականեն ունեցած հիշատակներու: Այդ հիշատակները շատ սիրելի են ինձի, բացի մենքն, որ խորապես լեղի է:

Ծրանավարտ ենենե հետո, իմ շատ սիրելի ուսուցիչս, Թովմաս Թերզյան, առանց որ ես իրեն այդպիսի բան մը ինդրած ըլլայի, օր մը բասկ ինձի թե գացած էր Կենդրոնական՝ խնամակալության հիմաստ ունեցած մեկ օրը, և զիս շերմորեն գովելե հետո առաջարկեր էր որ խնամակալությունը որ միլիոնատերներն կը բաղկանար (Արքի Էֆ. Ռուզան, Մկրտիչ Երամյան, Երովնակ, Արտ. Էֆ. Նորատունիշյան, Անտոն Հաճյան), զիս իր ծախրով դրեկը Փարիզ Ecole Normale, որպեսզի ուսուցչապետ ըլլալու պատրաստվեի, էֆենտիները պատասխաներ էին թե հարկ չկար ավելորդ ծախքերու ենթարկվելու և թե ինչ որ Կենդրոնականին մեջ սորված էի բավկա: Թերզյան զայտույթով ինչ պիտեր թե 30.000 փիտո հավաքած է արդեն և կը հուսա ի մոտ 30.000-ի հասցել: Թերևս ալ ավելի մեծ գումարի մը: Տես գիտեր թե 30.000 փիտոն ֆրանքով ինչ կընե: Հավանական է սակայն, որ 30.000 փիտյեն ավելի հավաքե: Գեղամ Սոլոմոնյան ալ, որ մորաքրոջ թոռն է, գրեք էր Սարաֆյանին հայունելու համար թե կը հավելի Պրիզիլի մեջ նոյն հապատակին համար հանգանակություն մը բանալ (որպեսզի Roseraigre-ի իմ չորրորդ հատորը կարենամ հրատարակեր), բայց Սարաֆյան չեմ գիտեր ինչու որևէ պատասխան չի տվեր:

Հարկ եղածը գրեցի թե Սոլոմոնյան մեծապես փախաքեր էի Փարիզ գալով գրական հմտություն զարգացնելու: Տարի մը հետո «Մուր խավեր կամ բամբասանք» թատրոնություն գրեցի, չորս ներկայացում ունեցավ այդ խաղը. (Երկու Բերա, մինը գիշեր մուսար... բացօդյա, մեկ Գատորքյ, մինը Խայտաշար) որուն շաբ մնաց 110 օւմանյան ուկի, հայրս ալ ինձի թիշ մը օգնեց, որով կրցի տարի մը մնալ Փարիզ և ազատ եւսե-ներ ընել: Այդ մեկ տարին կյանքին երշանիկ տարին եղավ:

Տարի մը հետո նորից Պոլիս եմ: Կենդրոնական տնօրեն Հարություն Մոստիշչյան ինձի հանձնեց գրականությանց պատմության դասերը ինչպես և ֆրանսական գրական պատմության մասնավոր դասընթացը: Երախտագետն պիտի ըլլայի Զեզի, առենապատիկ Ս. Հայր, եթե մղենիք Կենդրոնականի տնօրեն ալ. Ույանը այդ վարժարանին այս տարի կամ գալ տարի շրջանավարտ ելլոյներին մեկ երկուուր Փարիզ Ecole Normale դրկելու համար հարկ եղածն ընելու: Տես թե լադրերը օգնություն մը գտնել որպեսզի շահաքեր մասնագիտություն մը սորվին, այլ հարկ եղած գումարը տրվի, որպեսզի Կենդրոնականի լավագույն աշակերտներեն ումանք լրջորեն պատրաստվին ուսուցչապետի (և գրագետի) դերը գիտակցորեն կատարելու:

Պ. Գևորգ Սարաֆյան որ Զեր գլխավոր աշակիցն էր եր Դոր առաջնորդ էիր Հարավային Ամերիկայի Հայոց, Զեր մեկնելուն հետո, Զեր որոշումները գործադրեց խորած մտությամբ և անձնվիրությամբ: Իր համականության մեջ էր թե 25.000 փիտո հավաքած է արդեն և կը հուսա ի մոտ 30.000-ի հասցել: Թերևս ալ ավելի մեծ գումարի մը: Տես գիտեր թե 30.000 փիտոն ֆրանքով ինչ կընե: Հավանական է սակայն, որ 30.000 փիտյեն ավելի հավաքե: Գեղամ Սոլոմոնյան ալ, որ մորաքրոջ թոռն է, գրեք էր Սարաֆյանին հայունելու համար թե կը հավելի Պրիզիլի մեջ նոյն հապատակին համար հանգանակություն մը բանալ (որպեսզի Roseraigre-ի իմ չորրորդ հատորը կարենամ հրատարակեր), բայց Սարաֆյան չեմ գիտեր ինչու որևէ պատասխան չի տվեր:

Հարկ եղածը գրեցի թե Սոլոմոնյան և թե Սարաֆյանին:

Ընդունեցեք ամենապատիկ Ս. Հայր սորվածին բարեմայությանց հետ սիրայիր չերմ բարեներ:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

Փարիզ

Վեհափառ Տեր^(*)

Մեր մեծանուն, սիրելի ու դժբաղոյ հայ-ըենակից Կոմիտաս Վարդապետի հավաքած և դեռ շտպագրված հայ ժողովրդական և կրոնական եղանակները, ինչպես և իր ձևուագրաց մեջ գտնվող անտիպ աշխատությունները հրատարակելու հաստակով, ստորագրյալքս կազմեցինք Միություն մը, պիտի շանաճք կարելի եղածին շափ հանգամակությամբ և այլ ձևերով՝ գորացնել գումար մը, և ձեռնարկել այդ հրատարակության գործին. Մտադիր ենք ոչ միայն ի լուս ընծայել ինչ որ իր ձեռագիրներուն մեջ շահեկան է հայ երածշտության հասնար, այլև վերստին տպագրել իր դաշնակած երգերու հավաքածուներն անոնք որ սպառած են և որոնց պետք զգալի է մեր ու օտար հասարակության համար:

Մեր սիրելի ու տարաբաղդ երածշտապետին բոլոր ձեռագիրները ինչպես բոլոր գույքերը կը գտնվին Պոլիս, և ինչպես Կիմանաւէք Զեր Վեհափառության կողմէն հրա-

^(*) Նամակը ուղղված է Տ. Գևորգ Զ. Չորեցյան կաթողիկոսին:

հանգ տրված է որ առանց Զեր հրամանին անոնց ոչ ոք չդաշի: Կը խնդրեինք Զեր Վեհափառության որ հաճիք արտոնել Պոլս Հայոց Ամեն. Պատրիարքին որ այդ գույքերուն մեջն բոլոր ձեռագիրները գատն և որկեա Միության:

Մեր ընելիք հրատարակությանց վաճառումն զոյացած հասույթը պիտի միացնենք այն գումարներուն որ հավաքած են համագանձնությամբ, և Կոմիտաս Վարդապետի դարմանման հոկոյ Մասնախմբի ձեռքով կը հասուկացվին այդ հաստակին:

Միությունս արդեն կազմեցավ այդ Մասնախմբի նախաձեռնությամբ, և անոր մաս կը կազմեն բոլոր անդամներն այդ մասնախմբին:

Միությունս տարին անգամ մը Զեր վեհափառության պիտի ուղարկե իր գործունեությանց հաշվեցույցը, և զայն պիտի հրատարակն լրացրաց մեջ:

Հուսալով որ Զեր Վեհափառությունը իր վատահությամբ և իրախոսաներով պիտի պատվէ մեր ձեռնարկը, կը մատչինք ի համբույր Զեր Ս. աջոյն և կը խնդրենք որ ընդունիք մեր որդիկան սիրույն ու խորին հարգանաց հավաստիքը:

Ա. ՉՈՐԵՑՅԱՆ

